ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 13. ՀՈՒՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

1

Մինոս արքան իր մոտ էր հրավիրել հռչակավոր քանդակագործ Դեդալոսին: Կրետեում Դեդալոսը բազմաթիվ շինություններ է կառուցում՝ արքայական պալատը և նշանավոր Լաբիրինթոսը: Մինոս արքան Դեդալոսին թույլ չէր տալիս հեռանալ Կրետեից: Հնարամիտ Դեդալոսն իր և որդու՝ Իկարոսի համար փետուրներից ու մեղրամոմից թևեր է պատրաստում, և նրանք թռչելով փախչում են Կրետեից: Բայց ծովի վրայով թռչելիս Իկարոսը, մոռանալով հոր խրատները, շատ վեր է ձախրում: Նրա թևերն արևից հալվում են, և նա ընկնում է ծովը:



Պատկեր Կնոսոսի պալատից. Ծիսական խաղեր ցուլերի հետ

Հունական պետություններն աշխույժ ծովային կապեր ունեին հարևան երկրների հետ: Նրանք հեռավոր ռազմական արշավանքներ էին կատարում դեպի Եգիպտոս, Փոքր Ասիա, Պաղեստին: Ամենից հայտնի արշավանքը ***«Տրոյական պատերազմն»*** էր: